

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» 1997 թվականի մայիսի 14-ի ՅՕ-118 Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 15-րդ հոդվածի 2-րդ կետում «հաստատությունները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ասպիրանտուրայի, օրդինատուրայի, դոկտորանտուրայի կամ հայցողների համակարգի միջոցով գիտական կադրերի պատրաստում ապահովող գիտական կազմակերպությունները» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու նպատակն է խրախուսել գիտական կադրեր պատրաստող գիտական կազմակերպություններում սովորելու ցանկություն հայտնող անձանց, ինչպես նաև հավասար պայմաններ ստեղծել բարձրագույն ուսումնական հաստատությունների եւ գիտական կազմակերպությունների համար: Խնդիրն այն, որ ներկայումս գիտական կադրերի պատրաստման հիմնական ձեւերի գործադրման համար ԱԱՀ-ից ազատման արտոնություն է վերապահված միայն բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների համար, մինչդեռ նման գործում մասնագիտացված կազմակերպություններում՝ հիմնականում ՀՀ ԳԱԱ համակարգում գործող գիտահետազոտական ինստիտուտներում, օրինակ՝ ասպիրանտական կամ հայցողի համակարգով ուսուցում ստանալու ցանկություն ունեցող անձինք վճարում են ավելի մեծ գումար, ինչն էլ որոշակի անհավասար պայման է ստեղծում այս հաստատությունների միջեւ: Օրինագիծը համահունչ է նաև ներկայումս գիտության դերի բարձրացմանը միտված ՀՀ պետական ծրագրերին եւ հայտարարված քաղաքականությանը:

Հեղինակներ՝ [Վահան Հովհաննեսյան](#), [Արծվիկ Մինասյան](#), [Արտյուշ Շահբազյան](#), [Ռուզաննա Առաքելյան](#), [Արա Նռանյան](#)